մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշման (անհատական իրավական ակտի), **<u>այլ ոչ թե</u>** պայմանագրի միակողմանի լուծման (գործարքի) պատճառաբանությանը վերաբերող պահանջներին:

Հետևաբար թիվ ԵԴ/59580/02/22 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.04.2023 թվականի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը սույն գործով կիրառելի չէ:

Հիմք ընդունելով վերոգրյալ պատճառաբանությունը՝ Դատարանը գտնում է, որ «Պարադայս» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

<u>6. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Սույն գործով, նկատի ունենալով, որ Հայցվորը նախապես վճարել է հայցադիմումի ներկայացման համար օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, միաժամանակ արձանագրելով, որ հայցը մերժվում է, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Պարադայս» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի

հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am